

«Ընդլայնված Եվրամիության ազդեցությունը նոր անդամ-պետությունների վրա և հետագա ընդլայնման հեռանկարները»

Տրիեստե, Իտալիա
2005 թ. հոկտեմբերի 25

Եվրամիության օրենսդրության ինտեգրումը նոր և ապագա անդամ-պետությունների օրենսդրությանը

Ժակ Զիլլեր, Եվրոպական համալսարանի ինստիտուտ

- Ի՞նչ է իրենից ներկայացնում Եվրամիության օրենսդրությունը,
- Եվրամիության օրենսդրության պաշտոնական ինտեգրումը նոր և ապագա անդամ-պետությունների օրենսդրությանը,
- Եվրամիության նոր և ապագա անդամ-պետություններում Եվրամիության օրենսդրության միջազգայնացումը

Ի՞նչ է իրենից ներկայացնում Եվրամիության օրենսդրությունը:

- Եվրամիության օրենսդրության սահմանումը

ԱԿՏ

Չեխիայի, Էստոնիայի, Կիպրոսի, Լատվիայի, Լիտվայի, Յունգարիայի, Մալթայի, Լեհաստանի, Սլովենիայի և Սլովակիայի Եվրամիությանը միանալու պայմանների և Եվրամիության ստեղծման հիմքը ծառայող համաձայնագրերում կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ

Յոդված 2

Եվրամիությանը միանալու օրվանից սկզբնական համաձայնագրերի և ակտերի դրույթները, որոնք նախքան միանալը ընդունվել են հաստատությունների և Եվրոպական կենտրոնական բանկի կողմից, պետք է պարտադիր լինեն նոր անդամ-պետությունների համար և կիրառվեն այդ պետություններում՝ նշված համաձայնագրերի և սույն ակտի պայմանների համաձայն:

**Եվրոպայի սահմանադրության հաստատման մասին համաձայնագիր
Յոդված IV-438. Իրավահաջորդություն և իրավական շարունակականություն**

3. Հաստատությունների, մարմինների, գրասենյակների և գործակալությունների այն ակտերը, որոնք ընդունվել են համաձայնագրերի հիման վրա և այն ակտերը, որոնք չեղյալ են համարվել Յոդված IV-437-ով, մնում են ուժի մեջ: Դրանց իրավական ազդեցությունը պետք է սույն համաձայնագրի իրականացման ընթացքում պահպանվի մինչև այդ ակտերի չեղյալ հայտարարելը, կամ դրանցում փոփոխություններ կատարելը: Սույնը կիրառվում է նաև այն պայմանագրերի հանդեպ, որոնք ստորագրվել են անդամ-պետությունների կողմից համաձայնագրերի և այն ակտերի հիման վրա, որոնք չեղյալ են հայտարարվել Յոդված IV-437-ով:

Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու ժամանակ գոյություն ունեցող Եվրահամայնքի կամ Եվրամիության օրենսդրության այլ բաղադրիչները, մասնավորապես, հաստատությունների միջև կնքված պայմանագրերը, որոշումները և այն պայմանագրերը, որոնք Խորհրդի շրջանակներում հանդիպումների ընթացքում

ստորագրվել են անդամ-պետությունների ներկայացուցիչների կողմից, նաև այն պայմանագրերը, որոնք կնքվել են անդամ-պետությունների կողմից Միության կամ Համայնքի գործունեության կամ միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև այն հայտարարությունները, ներառյալ միջկառավարական գիտաժողովների համատեքստում արվածները և այն որոշումները, որոնք ընդունվել են Եվրախորհրդի կամ Խորհրդի կողմից, ինչպես նաև Միությանը կամ Համայնքին վերաբերող որոշումները, որոնք ընդունվել են ընդհանուր համաձայնությամբ անդամ-պետությունների կողմից, նույնպես պետք է պահպանվեն մինչև դրանց չեղյալ հայտարարելը կամ փոփոխելը:

4. Եվրահամայնքի արդարադատության դատարանի և առաջին ատյանի դատարանի օրենքը Հոդված IV-437-ով չեղյալ համարված համաձայնագրերի և ակտերի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ, ինչպես նաև այն ակտերը կամ պայմանագրերը, որոնք ընդունվել են դրանց կիրառման համար, անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց հետո պետք է մնան Միության օրենսդրության և, մասնավորապես, Սահմանադրության համեմատական դրույթների մեկնաբանման աղբյուր:

Ի՞նչ է Եվրամիության օրենսդրությունը:

- * Օրենսդրության սահմանումը,
- * Օրենսդրության հասկացության ծագումը,
- * Ինչի՞ համար է օրենսդրությունը:
 - Եվրահամայնքի օրենքի միանման կիրառումը
 - ընդլայնում ներքին շուկայի շրջանակներից այն կողմ
- * Եվրամիության օրենսդրության շրջանակները
 - նոր անդամ-պետություններ
 - ասոցիացված անդամներ
- * Օրենսդրության բովանդակությունը

Եվրամիության օրենսդրության բովանդակությունը

- * «օրենսդրություն»`
 - հրահանգներ
 - կանոնակարգեր
 - որոշումներ
 - «շրջանակային որոշումներ»
 - կոնվենցիաներ
- * «չգրված օրենք» (Եվրոպայի արդարադատության դատարանի և առաջին ատյանի դատարանի օրենքը, մրցակցության հետ կապված դեպքերում Եվրահանձնաժողովի «օրենքը»)
 - համաձայնագրերի և օրենսդրության մեկնաբանում, համաձայնագրերի և օրենսդրության համալրում, հատկապես` Եվրամիության հիմնական իրավունքների մասին հռչակագիրը
 - Համայնքի օրենքի սկզբունքները, օր.`
 - Համայնքի օրենքի ուղղակի ազդեցությունը (VanGend and Loos 1962)
 - առաջնայնություն (Costa v./Enel 1964)
 - "effet utile" և ընթացակարգային ինքնավարություն
 - Եվրահամայնքի/Եվրամիության համատեղելի մեկնաբանություն (Pupino 2005 III pillar/հենասյուն)
 - Եվրոպայի լավ կառավարման համար մշակված վարվելաձևի նորմեր (Եվրոպական օմբուսդեն)

Նոր կամ ապագա անդամ-երկրների օրենսդրության մեջ Եվրամիության օրենսդրության ֆորմալ ինտեգրումը

- * **Կանոնակարգեր (կամ որոշումներ)/հրահանգներ (կամ որոշումներ)**
 - ասոցիացված անդամ-պետությունների
 - նոր անդամ-պետությունների համար
- * **Առաջնահերթությունների ժամանակացույցը**
 - ասոցիացման մասին պայմանագիր/միանալու մասին համաձայնագրեր
 - առաջնահերթությունների էնդոգեն ցուցակ
- * **Ազգային օրենսդրության, կանոնակարգերի և վարչարարական գործելակերպերի համատեղելիության ապահովումը եվրոպականի հետ (անպայման չէ, որ օրենսդրությունը ձևականորեն ընդունվի)**
- * **Իրավական տեսակետից պարտադիր գործիքների կիրառումը**
 - նպատակ ունենալով թույլ տալ ուսումնասիրել օրենսդրությունը
 - քաղաքացիների, տնտեսվարող սուբյեկտների և միությունների համար ճշգրիտ տեղեկություններ տրամադրել իրենց իրավունքների և պարտականությունների մասին
- * **Ինչպե՞ս անել դա**
 - Թարգմանություն (ավանդական ազգային օրենսդրությանը համապատասխան դրա «վերածնակերպում»)
 - Ջուզահեռաբար տարվող միջաջառումներ (նաև կանոնակարգերի համար)
 - Եղանակներ, որոնք կիրառվում են ազգային օրենսդրությանը համապատասխան
 - Եղանակներ օրենսդրության և կանոնակարգերի հարմարեցման համար
 - Եղանակներ զուգահեռաբար տարվող միջաջառումների իրականացման համար
 - Եղանակներ հրապարակայնության և թափանցիկության ապահովման համար
- * **Մոնիտորինգ Եվրահանձնաժողովի կողմից**
 - ասոցիացման կամ նախնական միավորման ներքո
 - որպես նոր անդամ-պետություն

Եվրամիությանը միանալու պայմանների մասին

ԱԿՏ

Հոդված 38

Եթե նոր անդամ-պետությունը չի կատարել իր պարտավորությունները, որոնք նա ստանձնել է Եվրամիությանը միանալու հետ կապված բանակցությունների համատեքստում, դրանով իսկ լուրջ վնաս պատճառելով ներքին շուկայի գործունեությանը, ներառյալ ցանկացած պարտավորություն բոլոր հատվածների քաղաքականությունների գծով, որոնք վերաբերում են տնտեսական գործունեությանը, որը դուրս է գալիս տվյալ պետության սահմաններից կամ պարտավորությունների նման խախտման լուրջ վտանգի դեպքում Եվրահանձնաժողովը կարող է մինչև սույն Ակտի գործողության մեջ մտնելու օրվանից երեք տարվա ժամկետի վերջը Եվրամիության անդամ-պետության հիմնավորված խնդրանքով կամ իր սեփական նախաձեռնությամբ, ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Միջոցները պետք է համամասնական լինեն և առաջնահերթությունը պետք է տրվի այն միջոցառումներին, որոնք ամենից քիչն են խանգարում ներքին շուկայի գործունեությանը և անհրաժեշտության դեպքում նաև այն մեխանիզմներին, որոնք ուղղված են գոյություն ունեցող ճյուղերի պաշտպանության ապահովմանը: Նման պաշտպանական միջոցառումները չպետք է ընկալվեն որպես անդամ-պետությունների միջև առևտրի գծով ինքնակամ խտրականության կամ թաքնված սահմանափակումների միջոց: Պաշտպանության դրույթը կարող է սահմանվել նույնիսկ նախքան

Եվրամիությանը միանալը մոնիտորինգի արդյունքներով հայտնաբերված բացահայտումների հիման վրա և գործողության մեջ դրվել էվրամիությանը միանալու օրվանից: Այդ միջոցառումները պետք է պահպանվեն ոչ ավելի, քան անհրաժեշտ է և ցանկացած դեպքում պետք է դադարեցվեն, հենց որ համապատասխան պարտավորությունը կատարվի: Ինչևէ, դրանք կարող են կիրառվել առաջին պարբերության մեջ նշված ժամկետից հետո էլ մինչև համապատասխան պարտավորության կատարումը: Եվրահանձնաժողովը կարող է ի պատասխան նոր անդամ-պետության կողմից պարտավորությունների գծով կատարված առաջընթացի ըստ անհրաժեշտության ադապտացնել/արմարեցնել միջոցառումները: Եվրահանձնաժողովը պետք է նախքան պաշտպանական միջոցառումները հանելը տեղեկացնի Եվրախորհրդին այդ մասին և պատշաճորեն նկատի ունենա այն բոլոր նկատառումները, որոնք կատարել է Խորհուրդը այդ կապակցությամբ:

**Եվրամիությանը միանալու պայմանների մասին
ԱԿՏ
Հոդված 39**

Եթե լրուրջ թերություններ կան նման թերությունների ի հայտ գալու զգալի վտանգ կա կապված անցման, իրականացման վիճակի կամ շրջանակային/հայեցակարգային որոշումների կամ որևէ այլ համապատասխան պարտավորությունների, համագործակցության գործիքների կամ այն որոշումների գծով, որոնք վերաբերում են քրեկան օրենքի փոխադարձ ճանաչմանը, Եվրահանձնաժողովը կարող է մինչև սույն Ակտի գործողության մեջ մտնելու օրվանից երեք տարվա ժամկետի վերջը Եվրամիության անդամ-պետության հիմնավորված խնդրանքով կամ իր սեփական նախաձեռնությամբ, անդամ-պետությունների հետ խորհրդակցելուց հետո ձեռնարկել համապատասխան միջոցներ և նշել այն որոշակի պայմանները, որոնց ներքո պետք է գործողության մեջ դրվեն այդ միջոցառումները:

**Նոր կամ ապագա անդամ-պետության մեջ
Եվրամիության օրենսդրության միջազգայնացումը**

- * **Համապատասխան մասնակիցների/դերակատարների հայտնաբերում**
 - Կառավարություն և պառլամենտ
 - Հանրային կառավարում
 - Տեղական ինքնակառավարման մարմիններ
 - Դատարաններ և տրիբունալներ
 - Իրավապաշտպաններ և իրավաբանական խորհրդատուներ
 - Քաղաքացիներ, ասոցիացիաներ և տնտեսվարող սուբյեկտներ

- * **Ծանոթացնել Եվրամիության օրենսդրությանը**
 - Պրոպագանդան համար համապատասխան նյութերի օգտագործումը (ոչ միայն պաշտոնական ամսագրերը և այլն)
 - Ուսուցանել/տրեյնինգ հետևյալ թեմաներով.
 - Խտրականության բացակայության ապահովում և շարժման «հիմնական ազատություններ»
 - ԵՄ-ի հռչակագիրը
 - Եվրոպայի լավ կառավարման համար մշակված վարվելաձևի նորմեր (Եվրոպական օմբուսդեն)

**Հիմնական ազատությունների ԵՄ-ի հռչակագիրը
Հոդված 41. Լավ կառավարման իրավունքը**

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի, որպեսզի Միության հաստատությունների և մարմինների կողմից նրա գործերը լուծվեն անկողմնակալ, արդարացի ձևով և պատշաճ ժամկետներում:
2. Այս իրավունքը ներառում է.
 - յուրաքանչյուր անձի իրավունքը լսելի լինելու նախքան որևէ միջոցի կիրառումը, որը կարող է բացասաբար ազդել նրա վրա,
 - յուրաքանչյուր անձի իրավունքը հնարավորություն ունենալ օգտվելու իր անձնական փաթեթից, միևնույն ժամանակ հարգելով գաղտնիության, մասնագիտական և գործարար գաղտնիության պայմանները,
 - ղեկավարության պարտականությունը հիմնավորելու իր կողմից ընդունված որոշումները:
3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի պարտադրել Համայնքին շտկելու ցանկացած վնաս, որը իրենց պարտականությունների կատարման ժամանակ հասցվել է իր հաստատությունների կամ ծառայողների կողմից՝ համաձայն անդամ-պետությունների օրենսդրությունների ընդհանուր սկզբունքների:
4. Յուրաքանչյուր անձ կարող է դիմել Միության հաստատություններին համաձայնագրերի լեզուներից մեկով և պատասխան ստանալ հենց այդ նույն լեզվով:

Հոդված 42. Փաստաթղթերից օգտվելու իրավունք

Միության ցանկացած քաղաքացի, ինչպես նաև Միության անդամ-պետություններից մեկում ապրող կամ այդ պետությունում գրանցված գրասենյակ ունեցող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի օգտվել Եվրոպական պառլամենտի, Խորհրդի կամ Հանձնաժողովի փաստաթղթերից:

Նոր կամ ապագա անդամ-պետության մեջ Եվրամիության օրենսդրության միջազգայնացումը

- * **Համապատասխան մասնակիցների/դերակատարների հայտնաբերում**
 - Կառավարություն և պառլամենտ
 - Հանրային կառավարում
 - Տեղական ինքնակառավարման մարմիններ
 - Դատարաններ և տրիբունալներ
 - Իրավապաշտպաններ և իրավաբանական խորհրդատուներ
 - Քաղաքացիներ, ասոցիացիաներ և տնտեսվարող սուբյեկտներ
- * **Ծանոթացնել Եվրամիության օրենսդրությանը**
 - Պրոպագանդման համար համապատասխան նյութերի օգտագործումը (ոչ միայն պաշտոնական ամսագրերը և այլն)
 - Ուսուցանել/տրենինգ հետևյալ թեմաներով.
 - Խտրականության բացակայության ապահովում և շարժման «հիմնական ազատություններ»
 - ԵՄ-ի հռչակագիրը
 - Եվրոպայի լավ կառավարման համար մշակված վարվելաձևի նորմեր (Եվրոպական օմբուսդեն)
- * Պատշաճ միջավայրի ապահովում, որն անհրաժեշտ է նախնական կանոնների սահմանման համար
 - հոդված 234-ի գործողության և մեխանիզմների ըմբռնումը

**Եվրահամայնքի համաձայնագրի
Հոդված 234 (նախկինում 177)**

Արդարադատության դատարանը իրավասու է սահմանելու նախնական կանոնները հետևյալի վերաբերյալ.

ա. սույն համաձայնագրի մեկնաբանություն,

բ. Եվրահամայնքի և Խորհրդի հաստատությունների կողմից ընդունված ակտերի հիմնավորում և մեկնաբանում,

գ. Եվրախորհրդի ակտով ստեղծված մարմինների կանոնադրությունների մեկնաբանումը, եթե նման բան նախատեսված է այդ կանոնադրություններում:

Այն դեպքերում, երբ որևէ անդամ-պետության դատարանի կամ տրիբունալի առջև հարց է դրվել, որի դեմ համաձայն ազգային օրենսդրության իրավաբանորեն որևէ որոշում հնարավոր չէ կայացնել, այդ հարցը պետք է դատարանի կամ տրիբունալի կողմից ներկայացվի արդարադատության դատարան:

Նոր կամ ապագա անդամ-պետության մեջ Եվրամիության օրենսդրության միջազգայնացումը

- * **Համապատասխան մասնակիցների/դերակատարների հայտնաբերում**
 - Կառավարություն և պառլամենտ
 - Հանրային կառավարում
 - Տեղական ինքնակառավարման մարմիններ
 - Դատարաններ և տրիբունալներ
 - Իրավապաշտպաններ և իրավաբանական խորհրդատուներ
 - Քաղաքացիներ, ասոցիացիաներ և տնտեսվարող սուբյեկտներ
- * **Ծանոթացնել Եվրամիության օրենսդրությանը**
 - Պրոպագանդման համար համապատասխան նյութերի օգտագործումը (ոչ միայն պաշտոնական անսագրերը և այլն)
 - Ուսուցանել/տրենինգ հետևյալ թեմաներով.
 - Խտրականության բացակայության ապահովում և շարժման «հիմնական ազատություններ»
 - ԵՄ-ի հռչակագիրը
 - Եվրոպայի լավ կառավարման համար մշակված վարվելաձևի նորմեր (Եվրոպական օմբուսդենն)
- * Պատշաճ միջավայրի ապահովում, որն անհրաժեշտ է նախնական կանոնների սահմանման համար
 - հոդված 234-ի գործողության և մեխանիզմների ընթրնումը
 - Նախնական ուղղորդման գծով տրենինգ/ուսուցում
 - Դատավորներ
 - Պրակտիկ իրավաբաններ
 - Իրավապաշտպաններ
 - Իրավաբանական խորհրդատուներ
 - Հանրային հատվածի գծով մասնագիտացված պաշտոնյաներ
 -
 -